№ 58 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 26 1892 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 26 № 58

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ВЫСОЧАЙШЕ УЧРЕЖДЕННЫЙ,
ПОДЪ ПРЕДСѢДАТЕЛЬСТВОМЪ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЫСОЧЕСТВА НАСЛѢДНИКА ЦЕСАРЕВИЧА,
ОСОБЫЙ КОМИТЕТЪ.

Денежныя пожертвованія, предоставляемыя въ распоряженіе состоящаго подъ предсѣдательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича Особаго Комитета для помощи нуждающимся въ мѣстностяхъ, постигнутыхъ неурожаемъ, а также **заявленія** о желаніи жертвовать въ пользу нуждающихся хлѣбомъ (зерномъ и мукою), принимаются въ помѣщеніи Кабинета Его Императорскаго Величества, у Аничкова моста, ежедневно, за исключеніемъ дней неприсутственныхъ, от 11 час. утра до 3 час. дня. Пожертвованія отъ иногородныхъ слѣдуетъ адресовать: въ С.-Петербургъ. въ Высочайше учрежденный, подъ предсѣдательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича, Особый Комитетъ. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կապոյտ տետրակը և Թիւրք մամուլը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դպրոցական մարմնամարզութիւն. Նամակ Բագուից. Նամակ Շուշուց. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՑՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տպաւորութիւններ.

ԿԱՊՈՅՏ ՏԵՏՐԱԿԸ ԵՒ ԹԻՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ

—

Վերջին կապոյտ տետրակը, որի մէջ ամփոփված են անգլիական հիւպատոսների՝ Փոքր-Ասիայից և Հայաստանից ուղարկած տեղեկագրերը, մի արտասովոր ուրախութիւն է պատճառել Թիւրքաց լրագրութեան:

Կ. Պոլսի յայտնի „թէրճէմանը Հաղիգաթ“ և նրա հետ միասին ուրիշ Թիւրք լրագիրները, ահագին յօդուածներ նուիրելով վերջին կապոյտ տետրակին, աշխատում են համոզել, որ միայն վերջին տետրակի մէջ գրածներն են ճիշդ, իսկ նախորդները բոլորն էլ սուտ էին և շինծու:

«Որպէս զի մեր օսմանցի ընթերցողները,—ասում է «Թ. Հաղիգաթ»,—կարողանան իրաւամբ գնահատել այս անգամի Կապոյտ տետրակի մէջ պարունակած պաշտօնական գրութիւնները, պէտք է յիշեն, որ սրանից առաջ հրատարակած Կապոյտ տետրակները պարունակում էին բաւականաչափ այնպիսի անհիմն տեղեկութիւններ և անճիշդ խորհրդածութիւններ, որոնք բնաւին գոյութիւն չէին պատճառիլ մեր Օսմանցի ընթերցողներին. սակայն այս անգամուանը գրուած է բոլորովին չափաւոր լեզուով և մեծ մասն էլ խմբագրված՝ ճշմարտութիւնը խոստովանվելու եղանակով»:

Սակայն ի մեծ ցաւ Թիւրք լրագիրների, պէտք է խոստովանել, որ ամենամիամիտ ընթերցողի համար էլ շատ պարզ է, որ այդ ուրախութիւնը փքած և շինծու է, իսկ յայտնած կարծիքը՝ միանգամայն անհամոզեցուցիչ:

Ահա թէ ինչու:

Տարիների ընթացքում կապոյտ տետրակների մէջ Փոքր-Ասիայի և Հայաստանի անգլիական հիւպատոսների ձեռքով հաղորդվում էին պաշտօնական ամենասոսկալի տեղեկութիւններ և յուզիչ լուրեր այն բոլորի մասին, ինչ որ կատարվում էր այդ երկրի մէջ: Այդ պաշտօնական տեղեկութիւնները և լուրերը աղմուկ էին յարուցանում ոչ թէ միայն անգլիական լրագրութեան, այլ նոյն իսկ անգլիական համայնքների ժողովում և կառավարչական շրջաններում: Հաղորդված փաստերը ոչ ոք չէր հերքում, որովհետև հերքել չէր կարելի այն, ինչ որ պարզ էր ինչպէս լոյս:

Եւ ահա տարիների ընթացքում, երբ կապոյտ տետրակներից իւրաքանչիւրի բովանդակութիւնը մէկը միւսից աւելի սոսկալի, մէկը միւսից աւելի յուզիչ էր, Կ. Պոլսի Թիւրքաց մամուլը Զաքարիայի լռութիւն պահպանելով ոչ մի խօսք չէր ասում, ուշադրութիւն չէր հրաւիրում կապոյտ տետրակների մէջ հաղորդած հաղարաւոր փաստերի վրա,—իսկ այժմ, երբ վերջին կապոյտ տետրակի մէջ տպագրված են մի երկու հանգստացուցիչ տեղեկութիւններ, իսկոյն այդ նոյն լրագրութիւնը թմբուկ է խփում, հարայհրոց է գցում, գոչելով, „Ահա այս է ճշմարտութիւնը, այս է արդարութիւնը. իսկ մինչև այժմ հաղորդածները սուտ էին, շինծու և սարքովի:“

Կ. Պոլսի լրագիրները, իբրև ապացոյց իրանց ասածների, առաջ են բերում կապոյտ տետրակից՝ անգլիական երկու հիւպատոսների, այն է Կարինի փոխ-հիւպատոսի և Վանի հիւպատոսի կարծիքներից մի երկու կտոր:

Ահա Կարինի հիւպատոս պ. Համբսընի գրածը 1891 թուի մայիսի 23-ից.

«Հիւպատոսարանի մէջ գտնված և իմ նախորդի ձեռքով գրված տեղեկագրերը կարդալով, և նրանց պարունակութիւնը այս տեղերի ներկայ վիճակի հետ բաղդատելով, տեսայ, որ վերջին տարիների կառավարչական վարչութեան մէջ առանց տարակոյսի, մեծ բարեկարգութիւններ են գործ դրվել և որ օսմանեան պաշտօնեաները Կարինի մէջ՝ երկրի և ժողովրդի պէտքերը աւելի ճանաչելով՝ անդորրութիւն և ապահովութիւն պահպանելու և ժողովրդի կացութիւնը բարւոքելու համար սրտանց փափաք և մտադրութիւն են ցոյց տալիս»:

Իսկ սեպտեմբերի 22-ից նոյն հիւպատոսը գրում է.

«Թէև ժամանակ առ ժամանակ քիւրդերը անասներ են գողանում և գիւղեր են պատահում, սակայն դրանք թուով շատ քիչ են և կարևորութիւնից զուրկ, և բացի դրանից, ոչ-իսլամ հպատակներին զրկանք պատճառելու ձևով չեն պատահում, այլ իսլամ և ոչ-իսլամի՝ ամենքի համար են պատահում»:

Ապա մատնանիշ անելով Վանի հիւպատոսի այն խօսքերի վրա, որով նա յայտնում է, թէ „Daily News“ լրագրի հաղորդած մի քանի տեղեկութիւնները ճիշդ չեն, „Թէրճէմանը Հաղիգաթ“ ասում է.

«Մեզ համար ամենամեծ ցնորակալութեան արժանի կէտը այն է, որ հասկացված է «Daily News»-ի խաբված լինելը չարամիտ անձինքների ձեռքով, և նա բնականաբար պիտի ամաչի իր սիւնեակները բանալ չարամիտ գրութիւնների համար»:

Արդ, հարցնում ենք, ինչ արժէք և նշանակութիւն ունի Կ. Պոլսի Թիւրքաց մամուլի այդ փքած ուրախութիւնը մի երկու փաստի առիթով, քանի որ նոյն Թիւրքաց մամուլը լռութիւն է պահպանել հաղարաւոր, տասն հաղարաւոր աւելի նշանաւոր, աւելի ազդու և աւելի կարևոր փաստերի վերաբերմամբ:

Եւ իսկապէս վերջին կապոյտ տետրակի այն կէտերը, որոնց վրա հիմնում է „Թ. Հաղիգաթը“ իր ուրախութիւնը, շատ անզօր և անհիմն են: „Օսմանեան պաշտօնեաները, ասում է Կարինի հիւպատոսը, փափագ են ցոյց տալիս կարգապահութիւն պահպանելու“, իսկ Վանի հիւպատոսը աւելացնում է, որ „Daily News“-ի տեղեկութիւնները ճիշդ չեն“: Միթէ, հարցնում ենք մենք „Թերճ. Հաղիգաթին“, „պաշտօնեաների ցանկութիւնը՝ կարգապահութիւն պահպանելու“ և „Daily News“-ի մի քանի լուրերի անճշդութիւնը՝ ինքն ըստ ինքեան հերքում է այն բոլոր հաղարաւոր փաստերը, որոնք հաղորդվել են տարիների ընթացքում կապոյտ տետրակների մէջ, և միթէ, վերջապէս, լոկ բարի „ցանկութիւնը“ ապացոյց է, որ իրերի դրութիւնը փոխվել է....

Թոյլ ենք տալիս հաւատացնել Կ. Պոլսի Թիւրքաց մամուլին, որ այդպէս միամիտ ձևանալով անկարելի է խաբել հասարակաց կարծիքը, և որ իր բռնած այդ դիրքը բացի ինքնից ոչինչ օգուտ չէ կարող տալ Թիւրք կառավարութեանը, որը մեծ կարօտութիւն ունի անկախ, անկաշառ և ամբողջ պետութեան շահերին նուիրված աղնիւ մամուլի աջակցութեան....

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

—

Մեր ուսումնարաններում աւանդվող առարկաների մէջ բոլորովին անուշադրութեան է մատնված մարմնամարզութիւնը. համարեա թէ ոչ մի ուսուցիչ դրանով չէ հետաքրքրվում, դրանով չէ պարապվում, չը նայած որ համարեա թէ բոլորն էլ գիտեն, բոլորն էլ ուսումնարանական սեղանից լսել են, որ «առողջ հոգին առողջ մարմնի մէջ է» առածը:

Ինքն ըստ ինքեան հարց է առաջ գալիս թէ արդեօք այդ առարկայով չեն զբաղվում այն պատճառով, որ դպրոցական ծրագրի մէջ չը կայ, թէ ուսուցիչները աւանդելու ձևը չը գիտեն,—ահա մի հարց որ մութն է մեզ համար: Սակայն որը և հանեց տաճարը չրջապատող աստիճանաձև պատուանդանը, այդպիսով խախտեց տաճարի հիմքը և կամարները սկսել են ճեղքեր տալ.... Հիմա տեղակալը նոր պիտի վերականգնեցնէ այն, ինչ որ փչացրել են: Տաճարին համ վտանգ է սպառնում, համ էլ զրկել են նրան հայոց հնաւանդ ճարտարապետութեանը յատուկ կերպարանքից:

Փչացածը պէտք է վերանորոգել,—իսկ դրա համար դումարներ են հարկաւոր:

—

Ապրիլի 30-ին երեկոյեան առաջին անգամ ներկայ եմ դտնվել նախապատրաստական մի ժողովին: Զարմանալի մարդիկ են Թիւրքահայ թէ հոգևորական և թէ աշխարհական պատգամաւորները. առաջին խօսքը, որ ասեց ինձ Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփաննոս Յովակիմեան եպիսկոպոսը՝ այն էր թէ պէտք է կուսակցական կռիւները թողնել և հաշտվել հակառակորդների հետ.... Ստիպված էի նորին սրբազնութեանը ամբողջ ժողովի առջև բացատրել թէ ինչ բան է կուսակցութիւնը....

Թիւրքիայից եկած հայ հոգևորականներից Ստեփաննոս սրբազանը դեռ ամենահամակրելին և ամենախելօքն է....

Սրբազանը քարոզում էր ինձ հաշտութիւն, եղբայրութիւն, քրիստոնէական ներում հակառակորդների վերաբերմամբ: «Դա շատ լաւ բան է, սրբազան, ասեցի ես, բայց ոչ թէ մամուլի վերաբերմամբ, այն էլ զրպարտող, սուտ խօսող, ամբաստանող, դիտակցաբար մոլորեցնող մամուլի վերաբերմամբ.... Հաշտվել այդ տեսակ մամուլի հետ, լռել երբ նա անամօթաբար զրպարտում է՝ կը լինէր թուլութեան նշան, կը նշանակէր յաղթվել, պարտութիւն կրել....»

Նոյն առաջարկութեամբ դիմում էին ինձ Թիւրքիայի աշխարհական պատգամաւորներից շատերը. «Կաղաչեմ ձեզի, թողէք կուսակցական կռիւները, թողէք կուսակցութիւն և հաշտութիւն կայացրէք...»

«Դա անկարելի է, էֆէնդի, պատասխանում էի ես. դաւաճանել կուսակցութեան՝ կը նշանակէ դաւաճանել համոզմունքին, ձեռքից վայր գցել դրօշակը: Դուք երևի կարծում էք, որ կուսակցութիւն նշանակում է՝ անձնական թշնամութիւն.... Սխալվում էք. կուսակցութիւն նշանակում է որոշ համոզմունք, որոշ պրոգրամ, որոշ ծրագիր, որից համոզված մարդը երբէք չը պիտի շեղվի:»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ապրիլի 30-ին ես հասայ Էջմիածին: Առաջին տպաւորութիւնը նպաստաւոր էր. ամէն բան բարեկարգ երևաց ինձ: Տէր տեղակալը լաւ աշխատեց այդ մի տարվայ ընթացքում. Ղազարապատի հիւրանոցի սենեակները նորոգված են, վանքի չորս կողմ եղած աղբի կոյտերը տարված են, ուղիները խտակված, քարայատակված են, միաբանների համար նոր խուցեր են շինվում, վանքի սեղանատունը կատարելապէս նորոգված է. հին, փտած, բորբոսնած, հոտած ու խոնաւ՝ քարեայ յատակի, քարեայ սեղանի ու քարեայ նստարանների տեղ,—շինված է փայտեայ յատակ, դրված են փայտեայ սեղան ու աթոռներ, սեղանատան պատերն ու առաստաղը սպիտակ ներկով են ներկած: Տեսքը վայելուչ է: Հին սեղանատան մի մասը մնացել է իր նախկին դրութեան մէջ. մութ, բորբոսնած, կեղտոտ, խոնաւ,—նայողի վրա սարսափ ու զզուանք է ազդում.... Հնութեան այդ նմուշը բաժանված է նորոգված սեղանատնից մի վարագոյրով: Այժմեան սարքի ու կարգի դէմ բամբասողներին՝ խնդրում էին վարագոյրը յետ քաշել ու նայել թէ ինչ էր առաջ սեղանատունը և ինչ էր դարձել այժմ....

Թէ այս բոլորը, թէ ճեմարանը տեսնելով, թէ սինոդի թղթերի հետ ծանօթանալով՝ մեր Թիւրքիացի հիւրերը, յարգելի պատգամաւորները իրանց համոզմունքը փոխեցին, հասկացան թէ Կ. Պոլսի հայոց լրագիրների գրուածները Էջմիածնի մասին ուրիշ բան չէին, եթէ ոչ ամենաանամօթ զրպարտութիւններ.... Իսկ եթէ մայր-տաճարի հիմքը խախտված է, պատուանդանի չորս կողմ եղած աստիճանաձև ահագին քարերը հանված են ու հիմքը մերկացրած, տաճարի չորս կողմ եղած ստուերախիտ հրաշալի նալբանդ ասված ծառերը կտրված,—դրանում վանքի այժմեան վարիչները մեղաւոր չեն:

Ի դէպ. Էջմիածնում ապրող և վանքի վերաշինութիւններով զբաղվող Շուէրն ճարտարապետն ինձ ասեց, որ եթէ տաճարը այդ դրութեան մէջ մի երկու, երեք տարի մնայ,—կարող է փլել: Մի քանի տարի առաջ կանչել էին Թիֆլիսից մի հայ ճարտարապետ. սա կտրեց ահագին ծառերը, հանեց տաճարը շրջապատող աստիճանաձև պատուանդանը, այդպիսով խախտեց տաճարի հիմքը և կամարները սկսել են ճեղքեր տալ.... Հիմա տեղակալը նոր պիտի վերականգնեցնէ այն, ինչ որ փչացրել են: Տաճարին համ վտանգ է սպառնում, համ էլ զրկել են նրան հայոց հնաւանդ ճարտարապետութեանը յատուկ կերպարանքից:

Փչացածը պէտք է վերանորոգել,—իսկ դրա համար դումարներ են հարկաւոր:

—

Ապրիլի 30-ին երեկոյեան առաջին անգամ ներկայ եմ դտնվել նախապատրաստական մի ժողովին: Զարմանալի մարդիկ են Թիւրքահայ թէ հոգևորական և թէ աշխարհական պատգամաւորները. առաջին խօսքը, որ ասեց ինձ Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփաննոս Յովակիմեան եպիսկոպոսը՝ այն էր թէ պէտք է կուսակցական կռիւները թողնել և հաշտվել հակառակորդների հետ.... Ստիպված էի նորին սրբազնութեանը ամբողջ ժողովի առջև բացատրել թէ ինչ բան է կուսակցութիւնը....

Թիւրքիայից եկած հայ հոգևորականներից Ստեփաննոս սրբազանը դեռ ամենահամակրելին և ամենախելօքն է....

լինի պատճառը—այդ առարկան արժանի է կարևոր ուշադրութեան:

Քիչ չէ պատահում լրագիրներում կարդալ, թէ այս ինչ տեղ ուսումնարանը հին է, քանդվում է, խոնաւ է, անձրևի ժամանակ կաթում է և այլն: Բայց ինչ կասէք դրասեղանների համար: Մտնում էք դասատուն. հին ձևի երկայն նստարանները շարած, որոնցից իւրաքանչիւրի վրա հասակով տարբեր 4—5 հոգի, երբեմն և աւելի, նստոտած. ընդհանուր հայեացք էք ձգում և տեսնում, որ մէկի համար այդ դրասեղանի վրա գրելը յարմար է, միւսի միայն արմունկն է տեղանին հանում, երրորդը ստիպված է կանգնած գրել, չորրորդի միայն գլուխն է երևում և այլն: Մի՞թէ կասկածողներ կան, որ այդ տեսակ անյարմարութիւնները քայքայում են երեխաների առողջութիւնը: Եթէ ծնողներն իրանց որդոց ուսումնարան են տալիս, մի՞թէ այդ նրա համար է, որ նրանք փոքր ինչ գիտութեան պաչար ստանան, սակայն ֆիզիկապէս տկարանան: Անցաւ այն ժամանակը, երբ ծնողը իր որդու թևից բռնած քարշ տալով՝ տանում էր ուսուցչի մօտ և ասում. «միսը քեզ, ոսկորն ինձ»:

Թէ որքան մեծ նշանակութիւն ունի մարմնամարզութիւնը, բաւական գեղեցիկ կերպով բացատրում է գօկտոր Հիլլէը իր զեկուցման մէջ, որ ուղղել է ֆրանսիական լուսաւորութեան մինիստրին: Նա ասում է.

«Կանոնաւոր կրթութեան համար անհրաժեշտ է հիմնական մանկավարժական մարմնամարզութիւնը: Նա սերտ կապ ունի մտաւոր կրթութեան հետ, որի համար նա ամենաօգտակար և լրացուցիչ մասն է կազմում: Այս այնքան ուղիղ է, որ ամենուրեք, ուր ժողովրդական լուսաւորութիւնը բաւականաչափ տարածված է, մարմնամարզութիւնն էլ զուգընթացաբար առաջ է գնացած: Այսպիսով, եթէ վերցնենք Եւրոպայի քարտէզը, որը նկարված լինի դանազան գոյներով և համապատասխանէր ժողովրդական լուսաւորութեան առաջադիմութեան, ապա կը տեսնենք լուսաւորութեան և մարմնամարզութեան մէջ միատեսակ առաջադիմած՝ Պրուսիան, Սակսոնիան, Բաւարիան, Բադենի մեծ դքսութիւնը, Վիրտեմբերգը, Շվէյցարիան, Հոլլանդիան, Դանիան և Շվեդիան. այս տեղերում նա իր դաստիարակչական և հիմնական ուղղութեամբ նոյն աստիճանին է հասցրած, ինչ աստիճանի վրա որ գտնվում է մտաւոր կրթութիւնը: Երկրորդ տեղն են բռնում Ֆրանսիան, Անգլիան, Բէլգիան. երրորդ տեղն են բռնում Աւստրիան, Իտալիան և Յունաստանը, և վերջապէս վերջին տեղն են բռնում Ռուսաստանը, Սպանիան և այլն: Ամեն տեղ մի և նոյն զուգընթացութիւնը: Չէ որ սա ուշադրութեան արժանի մի կէտ է»:

Իսկ մեր դպրոցներում նոյն իսկ աւելորդ են համարում կանոնաւոր մարմնամարզութիւնը: Մենք գիտենք մի ուսումնարան, ուր ուսուցիչները պարապում էին մարմնամարզութեամբ. գարնանը ուսումնարանի բակի այն մասում, ուր աշակերտները չէին խաղում, աշակերտների հետ պարապող են չինում, վճռում են մարմնամարզական զբօսանքներ կազմել, մտածում են աշակերտական սիրողների խումբ կազմել, որ երբեմնապէս թէ հասարակութեան բաւականութիւն տան և թէ ուսումնարանին նիւթական օգուտ. դիմում են թեմական տեսչին թոյլտուութիւն ստանալու և ինչ էք կարծում, ինչ տեսակ պատասխան է տալիս տեսուչը: Մի տեսակ բարեհոգութեամբ և սիրտը ցաւելով ուսուցիչներին խորհուրդ է տալիս, «որ աւելի լաւ կանեն, եթէ մանկավարժական գրքեր կարդան և իրանց գործով պարապեն»: Ինչ անի ուսուցիչը, երբ այդ տեսակ խորհուրդներ է լսում իր իշխանաւորից:

Վերջապէս աւելորդ չէր լինի, որ վերջնականապէս կարգադրվեր որպէս զի մարմնամարզութիւնը իբրև անհրաժեշտ առարկայ աւանդվէր մեր ուսումնարաններում և աշակերտների առողջութեան խնդիրը դառնար առաջնակարգ խնդիր մեր դպրոցական կեանքում:

Ա. Թ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մայիսի 22-ին

Կ. Պոլսի աշխարհական պատգամաւոր պ. Կիւմիւշկերտեան և Զմիւռնիայի հոգևորական պատգամաւոր Ծ. Վ. Արսլանեան կիրակի, մայիսի 17-ին այստեղից ճանապարհվեցին: Յարգելի հիւրերը մեր հասարակութեան վրա թողին շատ լաւ տպաւորութիւն և վայելեցին բուռն յարգանք և հիւրասիրութիւն այն բանի համար, որ նրանք յարգելով ընդհանուր հայ ժողովրդի ձայնը՝ նպաստել էին Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրութեան գործին: Կիրակի օրը մեր հասարակութեան մի նեղ շրջանում հիւրերին պատուեցին մի ճոխ ճաշով: Հայր Արսլանեան նոյն օրը քարոզ խօսեց մեր եկեղեցում ընաբան վերցնելով «մի եմք» աւետարանի խօսքը. եկեղեցին հասարակութիւնով լի էր:

Նոյն օրը հայր Խորէնը պատարագից յետոյ կարճ կերպով բացատրեց ժողովրդին, խօսելով մեր մի քանի շռայլ սովորութիւնների վատ հետևանքների մասին և յորդորեց ժողովրդին գերեզմանատանը և տներում առհասարակ հոգեհաց տալու սովորութիւնը վերացնել: Պէտք է խոստովանել, որ ճշմարիտ այդ սովորութիւնը չատերին թէ պարտքի տակ է գցում և թէ վատ հետևանք է ունենում: Այդ սովորութիւնից առաջացել է մեզանում քելեխ ուտողների մի առանձին պրոլետարիատ, որը ապրելով գերեզմանատանը՝ անգործ սպասում են մի որ և է մեռելթաղի: Այդ օր Խաչատուր Լազարեանց իր կնոջ մեռելահացի տեղ նուիրեց Շամախու օրիորդաց դպրոցին 100 րուբլի, Բագուի հայոց օրիորդաց դպրոցին 100 րուբլի, իսկ իսկական աղքատների օգտին 50 րուբլի: Օրինակը շատ միսիթարական է:

Նաթային աշխարհում տիրում է յուսահատ իրարանցում: Ամենքը լարված, սպասում են մի աներևոյթ փրկարար ձեռքի: Ցայտնվել է մի այդպիսի ձեռք. սա ինչ որ 4 երևելի դրամատէրերից կազմված մի ընկերութիւն է, որը 10 միլիոն փող բանկում դնելով ապահովացնում է մեր բոլոր նաթարդիւնաբերողներին այն պայմանով, որ նրանք անպատճառ ամենքը միանան և երեք տարով պայմանաւորվեն այսպէս. հում նաթը 3 կոպէկ պուդը, կերոսինը 16 կ., իսկ մնացորդը $2^1/_2$ կ.: Ընդհանուր օգուտ կը մնայ այս գներով 3 պուդ սև նաթին 6 կ. նոյն քանակութիւնից դուրս կերոսինին նոյնպէս 6 կ.: Սակայն այդ բանին ոչ մէկը մեր գործարանատէրերից լուրջ չէ վերաբերվում, ամենքը ծիծաղում են և համարում այդ ընկերութեան անդամներին խելագարներ, մոռանալով որ նրանք առաջարկում են 3 տարի պայմանաժամանակ: Մոռանում են մեր նաթատէրերը և այն ժամանակը, որ շատ հին չէ, երբ սև նաթը 7 կոպէկ էր, կերոսինը 22 կ. մնացորդը 3—4 կոպէկ:

Այսպէս թէ այնպէս այդ բանը գլուխ չի գայ, որովհետև մեր մէջ անպայման միութիւն անկարելի է առաջ բերել:

Ա.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Մայիսի 20-ին

Քաղաքիս ամենահարուստ և ամենագեղեցիկ եկեղեցին Ղազանչեցոց մեծ նորաւարտ եկեղեցին է: Բայց դժբախտաբար այդ եկեղեցին չունի դարգացած, հասկացող քահանաներ: Անցեալ օրերը մեռաւ այդ եկեղեցու մի քահանան, մնացին երեք քահանաներ, որոնք բաւական չեն ահագին ծուխը հովանալու համար: Ժամանակի պահանջներին համապատասխանող քահանաներ ունենալ, որոնք կանգնած լինեն իրանց պաշտօնի բարձրութեան վրա,—այդ շատ ցանկալի է ժողովրդի մեծամասնութեան համար և միայն տեղային հոգևոր իշխանութիւնն է կատարեալ անտարբերութիւն ցոյց տալիս թէ ով կը լինի քահանան: Ցգէտ, գրի սեն ու սպիտակը հաղիւ ճանաչող տիրացուները այժմ ամեն ջանք գործ են դնում, որ Ղազանչեցոց եկեղեցում քահանայի տեղ բռնեն: Աղաչանքով մուրում են ստորագրութիւնները և էջմիածնի սինոդին հաւատացնել են ուզում թէ իրանք են արժանաւորներից արժանաւորագոյնները և թէ ժողովուրդը տենչանքով է սպասում թէ երբ իրանք քահանայի շոր կը հագնեն: Տեսնելով այդ անկոչների ճիգն ու եռանդը, Ղազանչեցոց ժողովրդի կողմից բաւականաչափ մարդիկ մի խնդիրք ուղարկեցին ամենապատիւ Ցեղակային, խնդրելով հրաման չը տալ այդ տեսակ տգէտներին ձեռնադրելու համար: Խնդիրքը բացատրում էր թէ ինչ է այժմ պահանջվում քահանայից, թէ ինչպէս ժողովուրդը օրից օր սառչում է եկեղեցուց, տեսնելով քահանայական պաշտօնում այնպիսի մարդկանց, որոնք միայն մի կտոր հաց վաստակելու համար են քահանայ դառել: Այդ պատճառով ժողովրդականները խնդրում են վերջ տալ այդ դրութեանը և ձեռնադրութեան հրաման չը տալ, մինչև որ ժողովուրդը կընտրէ մի լաւ, հասկացող մարդ և կը խնդրէ նրան քահանայ ձեռնադրել: Եւ ժողովուրդը յոյս ունի որ սինոդը կը յարգէ իր արդարացի խնդիրքը: Որքան ուրախալի է տեսնել ժողովրդի այդ ինքնաճանաչութիւնը, այնքան մսիթարական է այն հանգամանքը, որ սինոդը նոյնպէս ճիգ է թափում կարճել այն չարիքը, որ հասցնում են տգէտ և անարժան հոգևորականները:

Շուշեցի հանգուցեալ Միրզա Ադամեանի եղբայր Սարգիսը նուիրել է ի յիշատակ հանգուցեալի՝ 100 րուբլի թեմական դպրանոցին, 100 ր. օրիորդաց դպրոցին և 100 ր. Բարեգործական ընկերութեան դրադարանին:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, մայիսի 15-ին

Թիֆլիսի մի թերթի № 68-ի մէջ մի պարոն, Յ. Բուղդանեան, աշխատում է ապացուցանել, որ ես անբարեխիղճ թղթակից եմ և երկու մեղք է բարդում ինձ վրա, մէկ որ ես պ. Ս. Մամիկոնեանի մասին ասել եմ, թէ նա խրիմեանական չէ կաթողիկոսական հարցում, մինչդեռ նա իր մամնաւոր խօսակցութեան մէջ պ. Բուղդանեանի հետ «ոչ մի խօսքով ցոյց չի տուել, որ հակախրիմեանական լիներ, այլ ընդհակառակը երևում էր, որ աւելի հակված է դէպի այդ անձնաւորութիւնը», երկրորդը՝ որ ես պ. Ս. Շահազիզեանին խրիմեանական եմ անուանել, մինչդեռ պ. Բուղդանեան իբրև անհամեստ թարգման «նրա համոզմունքին կաթողիկոսացուների նկատմամբ» կարող է հաստատ ասել, «որ եթէ պ. Շահազիզն ընտրված լիներ թեմական պատգամաւոր, ամենևին իր ձայնը չէր տալու Խրիմեանին»:

Եթէ պարոնը աշխատէր միայն ապացուցանել, որ ես՝ այն է «ոմն Ց. Յովհաննիսեան, որին նա կարող է յարգել իբրև ժրաջան ուսանողի», սխալվել եմ, ես չէի պատասխանի նրան, բայց նա աշխատում է կասկածելի ցոյց տալ ինձ բարեխղճութեան կողմից, իսկ ես չէի ցանկանայ, որ մինչև անգամ նրանք անկեղծ համոզված լինէին, թէ ես անբարեխիղճ թղթակից եմ: Այդ պատճառով ես կաշխատեմ ապացուցանել, որ պարոնի կողմից ինձ անբարեխիղճ անուանելը անբարեխղճութիւն է կամ աւելի ճիշդ՝ ոչ—խելօքութիւն, որովհետև ինչպէս երևում է պ. Բուղդանեանը հարցին ամենաբարեխիղճ կերպով վերաբերվելիս էլ դժուար կը կարողանայ տրամաբանօրէն մտածել:

Խօսենք առաջ պ. Ս. Մամիկոնեանի մասին: Ես գրել էի այն, ինչ որ պ. Մամիկոնեան ասել էր եկեղեցում պատգամաւորի ընտրութիւնից առաջ և եզրակացութիւն էի արել այդ խօսքերից: Իմ գրածս հերքել ցանկացողը, եթէ տրամաբանութեան մասին մի որ և է գաղափար ունեցող մարդ լինէր, կամ պէտք է ապացուցանէր, որ ես ճիշդ չեմ մէջ բերել պ. Մամիկոնեանի խօսքերը, և կամ թէ, որ ես սխալ եզրակացութիւն եմ արել այդ խօսքերից,—հերքման երրորդ ձև անհնար էր այդ դէպքում: Բայց կան մարդիկ, որոնց համար, ինչպէս ասում են, չը կան տրամաբանական օրէնքներ: Եւ ահա դուրս է գալիս, որ ես ոչ միայն սխալվել եմ, այլ և անբարեխիղճ եմ վարվել, որովհետև չեմ նախատեսել, որ իմ թղթակցութիւնը գրելուց յետոյ չնորհք կը բերի Մոսկվա Նոր-Նախիջևանից պ. Բուղդանեան, մասնաւոր խօսակցութիւն կունենայ պ. Ս. Մամիկոնեանի հետ, այդ խօսակցութեան ժամանակ պ. Մամիկոնեան ոչ մի խօսքով ցոյց չի տայ, որ ինքը հակախրիմեանական լիներ, և պ. Բուղդանեանին կերևի, թէ նա աւելի հակված է դէպի այդ անձնաւորութիւնը... Ճիշդ որ կան այն աստիճան միամիտ մարդիկ, որոնց անհուն միամտութեան առաջ կարելի է զլխնթափ լինել...

Հաւատալ մասնաւորապէս ասած այն խօսքերին, որոնք հակասում են հրապարակօրէն ասածներին, դա անձնական հաւատի գործ է. ես իմանալով պ. Մամիկոնեանի՝ իմ թղթակցութեան դեռ ներելի է թիւրքիահայ հոգևորականին և թիւրքիահայ աշխարհականին չը հասկանալ ինչ բան է կուսակցութիւնը, մանաւանդ որ մսիթարականն այն է, որ նրանք բաւական շուտ են համոզվում.... Բայց ինչ կասէք մեր համալսարանական ինտելիգենցիայի մասին, որի թւում կան և երդուեալ հաւատարմատարներ և հաշտարար դատաւորներ, բոլորն էլ իրաւաբաններ....

«Ես ոչ մի կուսակցութեան չեմ պատկանում, ես կուսակցութիւններից բարձր եմ», արտասանում է ինքնահաւանութեամբ այդ տեսակ ինտելիգենտը....

«Եթէ դուք ոչ մի կուսակցութեան չէք պատկանում, նշանակում է որ ոչինչ համոզմունք չունէք», պատասխանում են նրան:

Եւ իրաւ, այդ ինտելիգենտներից ոմանք, այդ համալսարանական իրաւաբաններից ոմանք կատարելապէս զուրկ են որ և է որոշ, հաստատ, հիմնաւոր համոզմունքից, ծրագրից, պրօգրամայից: «Ի՞նչ որ թիւրքիացի պատգամաւորները կը ցանկանան, ես նրանց ցանկութեանը կենթարկվեմ և ձայն կը տամ կաթողիկոսական այն թեկնածուին, որին նրանք կառաջարկեն....»

Եւ այդ տեսակ մարդիկ անուանվում են համալսարանական, կրում են ինտելիգենտի, բարձրագոյն ուսում ստացած իրաւաբանների անունը.... Մարդս ակամայ ինքն իրան հարցնում է՝ ինչ են սովորել նրանք համալսարանում չորս հինգ տարվայ ընթացքում.... Չը դիտեն նրանք թէ որտեղ կեանք կայ, այնտեղ էլ կան կուսակցութիւններ, թէ ընտրողական սկզբունքը առանց կուսակցութիւնների՝ գոյութիւն ունենալ չէ կարող....

Էջմիածնից վերադարձած՝ Երևանում այդ մասին խօսակցութիւն ունեցայ այն պատկառելի, անզուգական, եօթանասուն տարեկան ծերունու հետ, որը ամբողջ Երևանեան նահանգից սիրված ու յարգված է իր անբիծ գործունէութեան, իր արտակարգ խելքի համար: Ծերունին ժպտաց. «Ուրեմն մեր համալսարանական իրաւաբանները, ասաց նա, մինչև այժմ չեն հասկացել որ ոչ մի ընտրողական սկզբունք առանց կուսակցութիւնների գոյութիւն ունենալ չէ կարող և կուսակցութեան չը պատկանել՝ նշանակում է անհատական համոզմունքից զուրկ լինել:»

Ուրեմն եօթանասուն տարեկան մի ծերունի, որը համալսարանական ուսում չէ ստացել՝ ընդունել է եւրոպական ամենանոր գաղափարները, իսկ համալսարանականները, որոնք տարիների ընթացքում լսել են պրոֆէսորների դասախօսութիւնները, կարդացած պիտի լինէին և Բլունչլի և Լորէնց-Շտեյն, և Բոշէր և Միտերմայեր և Գէրվինուս և այլն,—մինչև այժմ չեն հասկացել ինչ բան է ՀԿՕԼԱ, ԴՊՐՈՑ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ:

Շկոլային, դպրոցին, որոշ կուսակցութեան չը պատկանել,—նշանակում է զուրկ լինել համոզմունքից, որոշ ծրագրից, որոշ ուղղութիւնից....

Խելք ունեցողը առանց համալսարանի էլ խելօք կը մնայ, իսկ խելք չունեցողին ինչ պիտի օգնէ համալսարանը....

«Ես ոչ մի կուսակցութեան չեմ պատկանում», ասում էր մի համալսարանական արհամարհական ժպիտով....

«Դա ձեզ պատիւ չէ բերում, պատասխանում էին նրան. դա նշանակում է որ դուք համոզմունքից զուրկ մի մարդ էք....»

Բայց հասկանում էք բանն ինչումն է. այդ ողորմելիները ենթարկված են mania grandiosa ասված ցաւին. նրանք իրանց այն աստիճան բարձր են կարծում, որ իրանք բոլոր կուսակցութիւններից էլ բարձր են....

—

Վեց, եօթ օրվայ ընթացքում չփվելով Թիւրքիայից եկած հոգևորական և աշխարհական պատգամաւորների հետ, նրանց հետ անընդհատ յարաբերութիւններ ունենալով,—լաւ ճանաչեցինք նրանց: Ես, գոնէ նրանց մեծ մասի վերաբերմամբ, շատ անմեղատ կարծիք ստացայ: Բացի մի հինգ, վեց հոգի աշխարհական պատգամաւորներից, որոնք վերին աստիճանի համակրելի, ազնիւ, անկեղծ և սիրելի անձնաւորութիւններ են,—մնացածները, թէ հոգևորական և թէ աշխարհական՝ համ մտաւորապէս անզարգացած, համ էլ վերին աստիճանի ինքնահաւան մարդիկ են:

Նրանց մեծ մասի բնաւորիչ գիծը՝ անկեղծութեան բացակայութիւնն է, և մի և նոյն ժամանակ,—համեստութեան բացակայութիւն:

Այդ խօսքն ապացուցանելու համար՝ ձեռքումս ունեմ բազմաթիւ փաստեր նրանց արարքներից, ընտրողական պայքարի միջոցին:

Երևան. Գ. Ա.

տպվելուց յետոյ խօսածները, կարող էի համոզվել, որ նրա հրապարակաւ ասած խօսքերը ես սխալ եմ հասկացել, բայց կարող էի և ոչ-բոլորովին համոզվել,—այդ իմ անձնական գործն է: Յամենայն դէպս ոչ ոք իրաւունք չունի ինձնից պահանջելու, որ ես նախատեսէի, թէ ինչ կասի պ. Մամիկոնեան յետոյ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ: Գալով Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրութեանը, պ. Մամիկոնեան կարող էր ընտրութեան օրը ձայն տալ Խրիմեանին նոյնպէս և այն դէպքում, եթէ իմ գրածս ճիշդ լինէր: Ցաւով եմ պ. Բուդղանեան կը համաձայնի ինձ հետ, որ միաձայն քուէին մասնակցող 72 պատգամաւորների մէջ կային մարդիկ, որոնք այն կարծիքին էին, ինչ որ պ. Բուդղանեանի ասելով, պ. Շահազիզեանն էր:

Անցնենք երկրորդ մեղադրանքին: Ես չեմ ընդունում պ. Բուդղանեանին իբրև թարգման պ. Շահազիզի հայեացքների կաթողիկոսական հարցի նկատմամբ: Երբ որ պ. Բուդղանեան ապացոյց կոնենայ պ. Շահազիզի կողմից այն բանին թէ նա «ամենևին իր ձայնը չէր տայ Խրիմեանին», այն ժամանակ ես կը խոստովանեմ հրապարակօրէն, որ սխալվել եմ և կը կարմրեմ մասամբ ինձ համար...

Պ. Բուդղանեան, փառք Աստուծու, դուք ապրում էք Նոր-Նախիջևանում պ. Շահազիզից երկու օրվայ ճանապարհ հեռու. պ. Շահազիզեան մի շատ բարի մարդ է. գրեցէք և նրանից հարցրէք, թէ արդեօք իրաւունք ունէիք դուք այդ խօսքերը գրելու. նա ձեզ դուցէ ուրախութեամբ պատասխանի չնորհակալութիւն ձեր մատուցած «արջի ծառայութեան» համար:

Տ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի օր, մայիսի 24-ին, Վանքի եկեղեցում հաւաքված էր ահագին բազմութիւն: Այդ օրը պէտք է կատարվէր հոգեհանդիսատ հանգուցեալ մանկավարժ Պետրոս Շանչեանի յիշատակին, որից յետոյ պէտք է տեղի ունենար նրա վրա կառուցած արձանաքարի բացումը: Պատարագիչն էր Երուսաղէմի միաբան Սահակ եպիսկոպոսը, որը մի քարոզ ասեց և ի միջի այլոց խօսեց Շանչեանի մասին: Պատարագից յետոյ եկեղեցական դասը հանդէսով գնալով Շանչեանի գերեզմանի մօտ, որը գտնվում է Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկու և Հասան-Ջալալեան եպիսկոպոսի գերեզմաններին կից, կատարեց եկեղեցական արարողութիւնը: Գերեզմանի վրա պ. Գրիգոր Իզմիրեան մի ճառ կարդաց: Պէտք է նկատել, որ կառուցված արձանաքարը, որի համար հասարակութեան մէջ հանգանակութիւն է եղել բացված, բաւական գեղեցիկ է, չինված է քարից, քանդակագործութիւններով, և շրջապատված է երկաթեայ վանդակով:

—

Մեր ժողովուրդը, ինչպէս ցոյց են տալիս փաստերը, մի առանձին սէր ունի դէպի քարոզը: Երբ յայտնվում է, թէ այս ինչ օրը, այս հոգեորականը քարոզ պիտի խօսէ այս ինչ եկեղեցում, հասարակութիւնը ահագին բազմութեամբ խբռնվում եկեղեցին, և անհամբեր սպասում քարոզին: Բայց ափսոս... նա համարեա միշտ հիասթափվում է, տեսնելով իր առաջ քարոզիչներ, որոնք բեմ են բարձրանում, բայց ոչ բեմբասացութեան չնորհք ունեն և ոչ էլ մի երկու խելացի բան ասելու ընդունակութիւն... Քարոզիչը խօսում է դժուարութեամբ, բառեր չէ գտնում իր միտքը յայտնելու համար, նախադասութիւնները միմեանց հետ կապ չունեն, ձևերը անտանելի են, և այդ բոլորը բաւական չէ, ասածներն էլ այնպիսի ծամծմած բաներ են, որ լսողները կէսումը թողնում և դուրս են գնում... Շատ ցանկալի է, որ մեր հոգեորականութիւնը օգուտ քաղէր ժողովրդի դէպի քարոզն ունեցած սիրուց, և բեմ բարձրանային միայն նրանք, որոնք խօսելու չնորհ և մի խելացի բան ասելու ընդունակութիւն ունեն:

—

Երէկ, մայիսի 25-ին, տեղի ունեցաւ Երևանեան հրապարակի սկվերում բանաստեղծ Պուշկինի արձանի բացումը, ներկայութեամբ ահագին բազմութեան, գիմնազիաների և ուրիշ դպրոցների աշակերտների և վարժապետական խմբի, և զանազան պաշտօնական անձանց: Քաղաքագլուխ Իշխան Արգուտինսկի մի համառօտ ճառ արտասանեց՝ արձանի բացման մասին: Ապա արտիստ Դավիդով կարդաց մի ոտանաւոր. իսկ յետոյ ուսուցիչ Սլավկի արտասանեց մի ճառ Պուշկինի նշանակութեան մասին: Հանդէսը բաւական չքեղ էր: Ինչպէս յայտնի է, երևելի բանաստեղծը մի ժամանակ ապրել է սկվերի մօտ գտնվող մի տան մէջ, որն այժմ էլ կայ, և այդ պատճառով փողոցն էլ կոչվում է Պուշկինեան փողոց:

—

Կովկասեան կառավարչապետի օգնական կոմս Ցատիշչեվ, ընդունելով Էջմիածնի համազգային ժողովի պատգամաւորութիւնը, յայտնել է, որ կաթողիկոսական ընտրութեան թղթերը անմիջապէս կուղարկվեն ներքին գործերի մինիստրութեան, որպէս զի ներկայացվի թագաւոր Կայսրին ընտրութիւնը հաստատելու համար:

—

Երուսաղէմից մի մասնաւոր նամակով հաղորդում են, որ Խրիմեան Հայրիկ իր ընտրութեան առիթով, անթիւ և անհամար չնորհաւորական հեռագիրներ է ստանում:

—

Վաղը, չորեքշաբթի օր, մայիսի 27-ին, երգիչ պ. Շահլամեան կօնցերտ պէտք է տայ Գանձակում, իսկ այդտեղից վերադառնալով Թիֆլիս, իր կօնցերտը մեր քաղաքում կը տայ շաբաթ օր, մայիսի 30-ին, քաղաքային թատրօնում:

—

Մենք ստացանք Ի. Ֆ. Տիօրժեվսկու խմբագրութեամբ հրատարակվող «Բէրանժէի երգերի լիակատար ժողովածուի» առաջին տետրակը, որը մեծ դիրք ունի և բաղկացած է 10 երեսից: Առաջին տետրակի գինն է 20 կոպէկ: Առաջին տետրակի մէջ մտել է Բէրանժէի 10 հատ երգերի ռուսերէն թարգմանութիւնը, որոնցից մի քանիսը թարգմանել է ինքն հրատարակիչ Տիօրժէվսկի, իսկ մի քանի հատ էլ թարգմանել են Կուրոչկին և Լէբէդեվ:

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ Կովկասի կառավարչապետի հրամանով, Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէ այս օրերս բոլոր դաւառապետներին և քաղաքիս ոստիկանապետին շրջաբերականներ ուղարկեց, որոնցով արգելվում է արտասահմանեան անցագիրներ տալ Պարսկաստան գնալ ցանկացող անձանց, ի նկատի ունենալով Մեշհեդում տարածված խոլերան:

—

Նոյն լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսով անցան Բաքու և ապա Անդրկասպեան երկրի միջով գնացին Մեշհեդ երկու անգլիացի բժիշկներ, որոնց անգլիական կառավարութիւնն ուղարկել է Լօնդօնից՝ տեղի վրա ուսումնասիրելու խոլերայի բացիկները՝ Հնդկաստանի անգլիական երկիրները խոլերայից պաշտպանելու համար:

—

«Пет. Вѣд.» լրագիրը լսել է, որ արդարադատութեան մինիստրութիւնն անհրաժեշտ է համարում անյապաղ դրագրութիւն սկսել ս. սինոդի հետ՝ հոգևոր դատարանների վերանորոգութեան հարցի առիթով: Այդ հարցը մշակելու համար մտադրութիւն կայ խառն յանձնաժողով կազմել:

—

«Каспій» լրագիրը հաղորդում է, որ մայիսի 21-ին Բաքուից ճանապարհ են ընկել 10 ռուս դաղթականներ, որոնք եկել էին Անդրկասպեան երկրից, ուր տեղական իշխանութիւնները, դաղթականութիւնը դադարեցնելու վերաբերեալ նոր կարգադրութեան հիման վրա, առաջարկել էին նրանց հայրենիք վերադառնալ:

—

Լսում ենք որ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը առաջիկայ կիրակի օր հանդիսաւոր կերպով ծօնելու է իր գոյութեան տասնամեակը:

—

Բաֆայէլ Պատկանեանի օգտին ստացանք պ. Վախտանգ Նալբանդեանից, Արմաւիրից 80 բուբլի 40 կ., որը գոյացել է Արմաւիրի ժողովարանում մայիսի 7-ին ուսուցչական խմբի տուած մի ներկայացումից. Ղուբայից ստացանք պ. Գրիգոր Վարայեանից 17 բուբլի 50 կոպէկ, որ նա ժողովել է Ղուբայի հայ հասարակութեան մէջ. Աստրախանից պ. Գրիգոր Մելքումեան Սունդուկեանից 100 բուբլի, և պ. Գէորգ Բօրօղինեանից 25 բուբլի. Պեատիգօրսկից պ. Գ. Տէր-Յովհաննիսեանի ձեռքով հաւաքած 4 բ. 25 կոպէկ: Նախկին 988 բ. 20 կ. գումարի հետ միասին այժմ ունենք՝ 1215 բուբլի 35 կոպէկ:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Նաթայեան գործը ճգնաժամի մէջ է: «Փող» չը կայ, ասում են ամենքը. դրութիւնը խիստ կրիտիական է. մանաւանդ սպառնում է, մանկանալու երկիւղը, անուն արատաւորելու նախադատաստանը ինքնասպանութեան է հասցնում... Մանկանալու երկիւղի տակ պատասխանութեան առաջին զոհը հանդիսացաւ Գ. Ժամհարեան: Նա շուշեցի է. ընակվում էր այստեղ, ունի երկաթեղէնի լաւ խանութ. բացի խանութից ունի ընկերովի գործարան և նաւթահանք: Թէև շատ մեծ կարողութեան տէր վաճառականներից չէր, բայց այնու ամենայնիւ քիչ կարողութիւն չունէր: Վերջին ժամանակներս նրա գործերն ևս կաղում են, ուրիշների պէս այժ է տալիս մուրհակներին: Մուրհակների ժամանակը մօտենում է, պատրաստի դրամ չունի վճարելու... մի քայլ ևս՝ բողոքի պիտի մատնվի մուրհակապահների կողմից: Պատասխանութեան զգացումը դրդում է նրան օր առաջ վերջ տալ կեանքին՝ այսօր, առաւօտեան 7 թէ 8 ժամին, ատրճանակով վերջ է տալիս կեանքին խանութում, ուր սովորականից առաջ է եկած լինում: Նամակ է թողել կնոջ անունով. ներողութիւն է խնդրում և աւելացնում, որ ոչ դրի չը մեղադրեն իր սպանութեան մէջ. այդպէս էր հարկաւոր, այդպէս վարվեց: Հանգուցեալը 40—45 տարեկան հաղիւ լինէր: Այսօր լրացած են ասում նրա մի 4000 բուբլիանոց մուրհակի ժամանակը...»

—

Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկի մայիսի 18-ին կայացած ընդհանուր ժողովում ի միջի այլոց, վճռվեց 500 բուբլի տալ յունվարի 6-ի աղետից վնասվածների օգտին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՑ

—

Շապին-Գարահիսար, մայիսի 12-ին

Սև ծովի Պոնտոսեան եղերաց մօտ Կիրասոնից 24 ժամ դէպի հարաւ, լեռնային ամուր մի քաղաք է. իր անունն ալ արդէն ցոյց կը տայ, զի Գարահիսար կը նշանակէ բառ առ բառ Սև-պարիսպ: Քաղաքի արևմտեան բլրին վրա կը գտնվի վեհ դիրքով հինաւուրց մնացած բերդ մը: Կը պատմեն թէ էր երբեմն քաղաքն այդ բլրի վրա էր. և հաւանական ալ է, զի բաւական ընդարձակ է և մինչև հիմա դեռ ևս կը տեսնուին աւերակ շէնքեր, խարխուլ պատեր, կիսակործան աշտարակներ և մի քանի ջրամբարներ. այս բլուր բողոքվին անջատված այլ շղթայները ի հնումն անառիկ բերդաքաղաք մը եղած կը կարծուի: Այժմ այստեղ անգործածելի է:

Շապին Գարահիսարի ընդհանուր ընակչաց թիւը 3500 տուն կը հաշուին՝ հետևեալ բաժանմամբ. 900—1000 տուն հայ, 200 տուն յոյն և մնացած 2300 տունն ալ տաճիկ. տարբեր ազգաբնակութիւն չը կայ:

Տեղւոյս ժողովրդեան գլխաւոր պարապմունքն է առևտուրը և արդիւնաբերութիւնը՝ ցորենը: Հարուստներն առհասարակ, առանց բացառութեան վաշխառուներ են և անխիղճ տեսակէն, 30—40 տոկոս կը սպանան: Տեղւոյս արհեստաւորները շատ քիչ՝ և շատ յետ են. բացի կօշկակարութիւնէ և դերձակութիւնէ, միւս բոլոր արհեստները հին դրութեամբ ի գործ կը դրուին:

Թէպէտ քաղաքը փոքր է, բայց բաւական գոհացուցիչ առևտուր ունի, զի ներքին գաւառների (Ակնի, Արաբկիրի, Զմշկածագի, Գարան-չայի, Բարբերդի, Ամասանի) հետ միշտ յարաբերութեան մէջ է: Այդ գաւառներէ ճանապարհորդներ պակաս չեն Գարահիսարէ դէպի Կիրասոն տանող խճուղիին վրա:

Տեղւոյս հայերը 8—10 տարի առաջ մեծաւ մասամբ հարուստ էին, բայց հետզհետէ փչանալու վրա են: Ազգային կանոնաւոր դպրոց գրեթէ չունեն, այլ մասնաւոր մի քանի դպրոցներ կան՝ հին դրութեամբ: Այժմեան առաջնորդն է Խորէն վար. Կիրոյեան, որուն չնորհիւ ժողովուրդը զգալի կերպիւ յետ յետ կերթայ. սոյն արժանապատուութեան չնորհիւ՝ տեղւոյն հայ մանկտին այսօր կրթութենէ բոլորովին զուրկ է մնացել, և այն էլ մի այնպիսի առաջնորդի օրով, որը Մանչեստր առաջնորդութիւն ըրած և այլ քաղաքակիրթ երկիրներ գտնուած է:

Ամիսներ կանցնին կրթական մի բան չի քարոզվիր կամ խօսվիր, դպրոցը նորա համար արժէք չունի. անցեալ ամառ Ազգային ս. Փրկչեան վարժարանը հիւրանոց էր եղած առաջնորդի համար: Նրա դէմ բողոքներ տեղացին սկիզբէն մինչ ցայժմ պատրիարքարան, բայց ցաւ ի սիրտ անսանելի մնացին. յուսահատեալ այս ու այն կողմ դիմեցին որ և իցէ միջոցաւ հեռացնել զայն, բայց անկարելի եղաւ: Վերջապէս վարչական և գործօն մարմինները բոլորն ալ գործից քաշուեցան, յորմէ հետէ ժողովուրդը շուարած, առաջնորդն ալ մեկուսացած կապրի քաղաքէն 1 ժամ հեռի՝ Թամզարա գիւղաքաղաքի վանքին մէջ:

Ինչ կընէ արդեօք Պատրիարքը, ինչ կընեն արդեօք անդամք ուսումնական խորհրդոյ:

Գաւառներում ընդհանրապէս կրթական մեծ սով կայ. էլ ո՞ր օրուայ համար են առաջնորդները, էլ ինչ պաշտօն ունեն: Սոյն գաւառ լուրջ ուշադրութեան կարօտ է:

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիէննայից լրագիրներին հեռագրում են, որ Սոֆիայի և Սալոնիկի մէջ երկաթուղի կը չինվի:

—Միլանից հեռագրում են մայիսի 17-ին (29-ին), որ իտալական պատգամաւորների ժողովը, բիւդջէտը քննելուց յետոյ, կարձակվի: Նոր ընտրութիւնները կը կայանան յունիսի 26-ին:

—«Figaro» լրագրին հաղորդում են Մէցից, որ Նանսիում տեղի ունենալի ազնվամտութիւններին շատ էլդաս-լօտարինգցիներ կը գան:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մայիսի: Ս. Պետերբուրգի բօրսա. կալուածական բանկերի գրաւական թղթեր՝ Թիֆլիսի 6%—101 ր. 50 կ., 5%—99 ր., Քութայիսի 6%—101 ր. 50 կ., 5%—99 ր. 50 կ., Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան օբլիգացիաներն արժէն 98 ր. 50 կոպէկ:

ԲԵՐԼԻՆ, 23 մայիսի: Իշխան Բիսմարկի հետ հաշտութեան վերաբերեալ խօսակցութեան առիթով, ասում են, որ իշխան Բիսմարկի հանդիպումը կայսրի հետ տեղի կունենայ եկող շաբաթ: Աղդեցութիւն ունեցող անձինք ջանում են խանգարել հաշտութիւնը, դրանից ոչինչ հետևանք չը սպասելով. սակայն կայսրին շրջապատող չափաւոր մասը աշխատում է, որ հաշտութիւնը կայանայ և յոյս ունի, որ առաջին քայլը կանի իշխան Բիսմարկ: Կայսրուհին իբր թէ հաշտութեան դէմ է, կոմս Վալդերզէ նոյնպէս հաշտութեան կողմն է. իսկ կոմս Կապրիվի չէ դիմադրում:

ՊԱՐԻԶ, 23 մայիսի: Նանսիում հաւաքվեցան մօտ 20 մարմնարդական ընկերութիւններ ուսանողական ազնվամտութիւններին, որոնք շատ փառաւոր են լինելու:

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 23 մայիսի: Թագաւորական զոյգը և բոլոր օգոստափառ հիւրերը երէկ Ֆրէդէնսբօրգում տօնեցին Թագաժառանգ պրինցի ծննդեան օրը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի: Պետերբուրգում սպասում են ֆինանսների մինիստրին, որտեղից յունիսի կէսին կերթայ հանգստանալու Ստօկհօլմ, իր աղջկայ մօտ:—Շուտով իրաւունք կը տրվի բոլոր դպրոցների աշակերտներին երկաթուղիների 2-րդ և 3-րդ կարգի վագոններով ճանապարհորդել 50% զիջումով:—Մայիսի 13—22-ը առանձին մանաժողովը ստացել է 62,611 ր. ի միջի այլոց 20,000 ր. Պետերբուրգի աղնվականութիւնից, 16,546 ր. ֆինանսների մինիստրութեան ծառայողներից և հիմնարկութիւններից, 7,500 ր. զանազան նուիրատուներից Սերբիայում, և 1,000 բուբլի Կիէվի քաղաքային դումայից:—Կարգադրված է որ եկեղեցական միաբանութիւնները բոլոր թեմերում բանան ծխական-եկեղեցական դպրոցներ և դրագիտութեան ուսումնարաններ, անկախ զէմստվոների և միւս դպրոցներից, և որ բոլոր թեմերում, ըստ կարելիութեան, բացվին դրագիտութեան ուսումնարաններ աղջիկների համար:

ԲԵՐԼԻՆ, 24 մայիսի: Երկուշաբթի օր կայսրը գնում է Կիլ:

ՀՌՕՄ, 24 մայիսի: Պատգամաւորների ժողովում այսօր քննվեց ժամանակաւոր առևտրական դաշնագիրը Բոլգարիայի հետ, որը և հաստատվեց:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Մայիսի 22-ին

Լօդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	95 ր. 61 կ.

Բերլին վրա 100 մարկ	—	46 ր.	60 »
Պարիզի վրա 100 ֆրանկ	—	— »	— »
Ոսկի — — արժէ		7 »	57 »
Մաքսայի կուպոններ	—	151 »	60 »
Արծաթ — — —		1 »	10 »
Բօրսային դիսկոնտեր	—	4 »	5½ »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի		103 »	50 »
— — — — 2-րդ	—	103 »	37 »
— — — — 3-րդ	—	— »	— »
— — — — 4-րդ	—	— »	— »
— — — — 5-րդ	—	— »	— »
— — — — 6-րդ	—	102 »	25 »
6% ոսկեայ ընտա		156 »	50 »
4% ոսկեայ փոխառութիւն		— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.		— »	— »
— — — 2-րդ	—	103 »	— »
— — — 3-րդ	—	104 »	50 »
Ներքին 5% առաջին փոխառութ.		242 »	— »
— — երկրորդ	—	221 »	50 »
Պետական երկաթուղային ընտա.		104 »	12 »
5½ ընտա		— »	— »
4% ներքին փոխառութեան		95 »	12 »

5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		102 »	12 »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ.	—	193 »	— »
5½% վկայակ. դիւղ. հող. բանկի		105 »	— »
4½% գրական թղթեր կալուած.			
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.		149 »	25 »
— — — թղթադ.		102 »	50 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները		101 »	87 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ		101 »	50 »
Օդէսայի — —		102 »	12 »
Թիֆլիսի — —		— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի		— »	— »
— — Քութայիսի —		— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Ժամանակաւոր-խմբագիր՝ Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

МУЗЫКАЛЬНЫЙ МАГАЗИНЪ въ Тифлисѣ

ՆՕՏԱՅԻՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Ց. ՍՈՒԶԱՆԱՃԵԱՆԻ

Մատակարար (поставщикъ) Թիֆլիսի բաժնի Ռուսաց Արքունական Կոնսերվատորիայի.

Վաճառվում են Կովկասեան եղանակներից.

Կորդանեանի. Նոր բայաթի. Nouveau Bayati.

» Հայկական բապսոդիա, Rhapsodie Arménienne.

Տիգրանեանի. Կովկասեան եղանակներ և պարեր. Frans Kaucasische.

Ա.Ֆրիկեանի. Մայր Արաքսի. Պարոնբէկեանի՝ Հազար երանի.

Տէր-Յովսէփեանի՝ Մանկական երգարան (նոտաներով).

Հայկական Մարշ. Marche Arménienne.

Ծիծեռնակ (Նոր փոխադրութիւն) Цицернакъ.

Նոյնպէս և մեծ քանակութեամբ ամեն տեսակ նոտաների, պիանօի, ջութակի, ֆլէյտի և այլ գործիքների համար: Ռօեալներ, պիանօներ, Շրէդերի և ուրիշ ֆաբրիկաների, կան ծախու և վարձով տալու՝ ջութակներ, ֆլէյտաներ, ֆիսհարմոնիաներ, ջութակի լարեր և այլն.... Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են իսկոյն:

Դիմել հետևեալ հասցէով. г. Тифлисъ, Музыкальный магазинъ Ив. Сузанаджянъ.

№ 53. 2—10

ИВ. А. СУЗАНАДЖЯНЪ.

Պետերբուրգի հայ ուսանողների հետևեալ հրատարակութիւնների պահեստը փոխադրված է Թիֆլիսի կենտրոնական դրավաճառանոցը, ուր և կարող են դիմել ցանկացողները:

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ, գինն է	2 ր.
ԳԱՐԻԲԱԼԴԻԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ (սակաւաթիւ)	1 »
ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍԸ	— » 2 կ.
ԱԶՕ ՄԱՐՈՒՆ	— » 3 կ.

№ 54 4—8

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՕՆԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Սիզրանի ասֆալտի գործարանի բարձրագոյն հաստատված ընկերութեան ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԹՈՒՄՈՒՄ: Յանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով.

ԹԻՖԼԻՍ. Ալէքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Չերնեաեվին:

ԲԱԹՈՒՄ. Սադովայա փողոց, № 3, պ. Սուխանովին:

№ 54 4—15

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

ՀԱՄ. ՅՈՎ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ. կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօր կոչ յետոյ:

(№ 145) 51—150

ՓԱՑՏԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ (կայարանի մօտ, Կորգանովի ձիաքաշի գծի վրա): Վաճառվում է մաս-մաս, սկսած 1/8 խորանարդ սաժէնից. չոր, խոհանոցի և հացագործների համար, ամենամատչելի գնով: Նոյն տեղը գնում են մեծ քանակութեամբ փայտ անտառատէրերից: № 56 3—10 (Հ.)

ՄԻ ՖՐԱՆՍՈՒՀԻ կամենում է դասեր ունենալ: Հասցէն. Нѣмецкая улица, տուն № 5 (ձիաքաշի պատելու տեղը):

(№ 56) 3—6

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ մատչելի գներով պատրաստում է աշակերտներ բոլոր հայ ուսումնարանների համար. յանձն է առնում պարապել նաև վերաքննութիւն ունեցողների հետ:

Հասցէն կարելի է հարցնել „Մշակի" խմբագրատանը:

(№ 55) 3—5

Բէալական դպրոցում ուսած ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ, կամենում է դասեր ունենալ: Հասցէն թողնել „Մշակի" խմբագրատանը: (№ 55) 3—3

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլօլակսկայա փողոց, տուն Աղաբաբովի, Ամառնային գործնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար:

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով:

Սարպինկայի գուլպաների թել, սադա, գոյնզգոյն: Ներկերը տևողական են:

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կոպէկ:

Սարպինկայի իւբկաներ 1 ր. 80 կ. և աւելի թանգ:

Սարպինկայի քթի աղլուխներ և գլխի թաշկինակներ:

ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԷՆԴԷՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ

(№ 47) 9—30

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-ն Մայիսի 1892

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բաղուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	105,209—59	182,685—22	287,894—81
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	652,500 —	181,000 —	833,500 —
3. Աւանդներ բանկներում	100,000 —	— —	100,000 —
4. Զեղչ. (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	2,772,750—13	1,081,376—12	3,854,126—25
5. Զեղչ. մուրհ. ապահ. տոկոսաբեր թղթերով.	40,000 —	— —	40,000 —
6. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	10,329—12	2,285—50	12,614—62
7. Փոխառութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	916,261—03	521,652 —	1,437,913—03
բ) » ոչ ապահ. » »	197,740 —	15,415 —	213,155 —
գ) ապրանքների	— —	115,560 —	115,560 —
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	6,658—99	6,658—99
8. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	1,184,690—65	71,866—89	1,256,557—54
9. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	190,782—43	285—79	191,068—22
10. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	4,662,051—84	— —	4,662,051—84
բ) Բանկի հաշիւը (Nostro)	4,588,784—33	— —	4,588,784—33
11. Բաժինների հաշիւը կենտր. վարչութեան հետ	272,313—23	— —	272,313—23
Կենտրօն. վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	335,884—73	335,884—73
12. Բողոքուած մուրհակներ	— —	— —	— —
13. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւններ	34,165 —	10,640 —	44,805 —
14. Ընթացիկ ծախսեր	21,736—26	9,992—84	31,729—10
15. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	2,656—75	3,025—91	5,682—66
16. Յետ ստացուելիք ծախսեր	61,234—38	2,283—35	63,517—73
Ր. Ա.	15,813,204—74	2,540,612—34	18,353,817—08

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բաղուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	202,510—72	— —	202,510—72
3. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	2,923,858 —	528,589 —	3,452,447 —
բ) յ'Պահանջ	273,907 —	56,030 —	329,937 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ	1,410,214—45	1,385,364—43	2,795,578—88
դ) » » պայմանաւոր	— —	130,747—83	130,747—83
4. Փոխառումն պետ. բանկայի Թիֆլ. բաժն. ապահովված զեղչեալ մուրհակներով.	— —	— —	— —
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բանկի Թիֆլ. բաժն. ապահով. տոկոս. թղթերով	— —	— —	— —
6. Թղթակիցներ՝	— —	— —	— —
ա) Նոցա հաշիւը (Loro)	4,791,513—16	— —	4,791,513—16
բ) Բանկի հաշիւը (Nostro)	4,712,211—04	— —	4,712,211—04
7. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	313,451—04	313,451—04
Կենտրօն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	221,670—71	— —	221,670—71
8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը	24,100—60	— —	24,100—60
9. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	88,915—11	23,751—67	112,666—78
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	108,231—20	58,364—28	166,595—48
11. Փոխանցիկ գումարներ	56,072—75	44,314—09	100,386—84
12. Բողոքված մուրհակները	— —	— —	— —
13. Արդիւնք 1891 թ.	— —	— —	— —
Ր. Ա.	15,813,204—74	2,540,612—34	18,353,817—08

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Мая 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.